ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 03... հունիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Զ.Ղուկասյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Կ. Բալայանի

Քննության առնելով Արամ Շմավոնյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղաքացի Արամ Շմավոնյանը 19.05.2008թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասերի, ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերի, 4-րդ կետի 3-րդ ենթակետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ և 118-րդ հոդվածների սահմանադրականությունը:

2. Դիմումը ներկայացվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների, ինչպես նաեւ սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին համապատասխան: Պահպանվել է սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքների դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

3. Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118 հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 4-րդ մասի 3-րդ կետը դիմողի առնչությամբ չեն կիրառվել:

Մինչդեռ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասի՝ անհատական դիմում «կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով *կիրառվել* է որեւէ օրենքի դրույթ, որը

սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը.

ՈՐՈՇԵՑ

1. Քաղաքացի Արամ Շմավոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118 հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 4-րդ մասի 3-րդ կետի սահմանադրականությունը վիճարկելու մասով, գործի քննությունը մերժել:

2. Քաղաքացի Արամ Շմավոնյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասերի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի և 118-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը վիճարկելու մասով, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին: